

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 134/10

Քաղ. Երեւան

30 օգոստոսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա. Ազիզյան, անդամներ՝ Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. օգոստոսի 30-ի նիստում (արձանագրություն N83/1) քննարկեց « SAS IP, Inc.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. հուլիսի 17-ի «ANSYS» (IR 986047) բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Կրկնական փորձաքննության որոշման մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը եւ «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 15-րդ կետի 2-րդ ենթակետը և 93.2-րդ, 98.1-9-րդ կետերը, համաձայն որոնց, որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին: ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան գրանցման գործողություն ունեցող շփոթելու աստիճան նման «INSIS» («FADATA» OOD, Cherni Vruh Blvd 16 GB-1421 Sofia (BG)) ապրանքային նշանի առկայության պատճառով (IR 840212), «ANSYS» (IR 986047) բառային ապրանքային նշանը գրանցվել է միայն 42-րդ դասի ծառայությունների համար:

Բողոքարկողը իր բողոքում նշել է, որ իմաստային տեսակետից՝ «ANSYS» և «INSIS» նշանները չեն կարող միմյանց նման լինել, քանի որ երկուսն էլ մտացածին են, իսկ եթե չկա որոշակի իմաստային նմանություն, ապա ինչպես կարող են նշանները շփոթության աստիճանի նմանեցնել:

Նշում է նաեւ, որ հնչյունաբանական տեսակետից այդ նշանները տարբեր են. մի դեպքում՝ «անսիս», իսկ մյուս դեպքում՝ «ինսիս»: Քանի որ լսելու տեսակետից բառի սկզբնամասը ավելի շուտ և հեշտ է ընկալվում, ապա կարող ենք պնդել, որ «ան»-ը և «ին»-ը ընկալվում են տարբեր ձևով,

իսկ երկրորդ վանկերը ավելի թույլ են, այդ իսկ պատճառով էականորեն չեն ազդում բառերի ամբողջական ընկալման վրա:

Տեսողական տեսակետից նույնպես նշանների տարբերությունն ակնհայտ է: Նշանների առաջին տառերը տարբեր են, իսկ ինչպես հայտնի է, բառի ընկալման համար բավական է տեսնել առաջին և վերջին տառերը: Այս դեպքում մերժված նշանի առաջին տառը «A»-ն է, իսկ հակադրված նշանինը՝ «I»-ը: Պարզ է, որ տեսողական տեսակետից այս տառերը, իրենց գրաֆիկական տարբերության պատճառով, չեն կարող ընկալվել միևնույն կերպ: Բացի այդ, բառերի նախավերջին տառերը նույնպես տարբեր են՝ «Y» եւ «I», իհարկե ընկալվում են տարբեր ձևով եւ դժվար թե սպառողը շփոթի այդ տառերն իրար հետ:

Բողոքարկողը նշում է, որ չնայած նրան, որ մերժված «ANSYS» և հակադրված «INSIS» ապրանքային նշանները ներկայացված են 09 դասի ապրանքների համար, սակայն «ANSYS» նշանը հայտարկված է «համակարգչային ծրագրեր ինժեներական վերլուծության բնագավառում օգտագործելու համար» ապրանքի համար, իսկ «INSIS» նշանը պահպանված է «համակարգչային ծրագրային ապահովում և համակարգչային ծրագրեր (գրանցված և բեռնվող) ապահովագրական գործունեության և դրան վերաբերող գործունեության բնագավառներում օգտագործման համար»:

Այսինքն, չնայած նրան, որ ապրանքները պատկանում են նույն դասին, սակայն վերաբերում են տարբեր ոլորտների՝ մեկը նախատեսված է ինժեներական վերլուծության համար, իսկ մյուսը ապահովագրական գործունեության համար: Բնականաբար, ինժեներական վերլուծության համար նախատեսված համակարգչային ծրագրերից օգտվողները չեն կարող շփոթել դրանք ապահովագրական գործունեության համար նախատեսված համակարգչային ծրագրերի հետ, քանի որ դրանք միանգամայն տարբեր ոլորտներ են:

Բողոքարկողը ուշադրություն է սեւեռում նաեւ այն հանգամանքին, որ որ և՛ մերժված, և՛ հակադրված նշանների ցանկում առկա է 42 դասը, ընդ որում «ANSYS» նշանը պահպանություն է ստացել համակարգչային ծառայությունների համար ինժեներական վերլուծության ոլորտում, իսկ հակադրված «INSIS» ապրանքային նշանը պահպանված է համակարգչային ծառայությունների համար ապահովագրական գործունեությունում ոլորտում: Սակայն փորձաքննությունը, համարելով դրանք միմյանցից շատ տարբեր ոլորտներում մատուցվող ծառայություններ, երկու նշաներին էլ պահպանություն է ընձեռել, իսկ նույն դեպքում 09-րդ դասի համար համարել է շփոթության աստիճանի նման և կայացրել մերժման որոշում: Եվ նշել է, որ երկու նշաններում էլ 42-րդ դասի ծառայությունները մատուցվում են 9-րդ դասին պատկանող ապրանքների օգնությամբ: Եվ եթե նշանների 42-րդ դասի ծառայությունները համարվել են տարբեր, ապա հետևաբար 09-րդ դասի ապրանքները տրամաբանորեն նույնպես տարբեր են:

Որպես ամփոփում իր բողոքի, բողոքարկողը խնդրում է, հաշվի առնելով վերը նշված փաստարկները, վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և Յայաստանի Յանրապետության տարածքում պահպանություն ընձեռել IR 986047 միջազգային գրանցմամբ «ANSYS» ապրանքային նշանին 9-րդ դասի հայտարկված բոլոր ապրանքների նկատմամբ:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2010 թվականի ապրիլի 20-ի կրկնական փորձաքննության որոշմամբ մերժել է «SAS IP, Inc.» ընկերության «ANSYS» IR 986047 միջազգային գրանցման տարածումը Հայաստանի Հանրապետությունում, հիմք ընդունելով շփոթելու աստիճան նման «INSIS» («FADATA» OOD, Cherni Vruh Blvd 16 GB-1421 Sofia (BG)) ապրանքային նշանը առկայությունը:

Ընդհանուր քննարկման արդյունքում կոլեգիան հանգել է այն եզրակացության, որ բողոքում նշված փաստարկները համապատասխանում են ճշմարտությանը:

Քննարկելով կյուրթերը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է 09-րդ դասի համակարգչային ծրագրերի ապրանքատեսակի մասին, որը բացի «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքից պահպանվում է նաեւ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով, կոլեգան առաջարկեց բողոքը բավարել:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «SAS IP, Inc.» ընկերության բողոքը ամբողջությամբ եւ գրանցել «ANSYS» IR 986047 ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա. Ազիզյան